ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 հուլիսի 2022 թվականի N 210-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 2.2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 256-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի ***Չարենցավան, Բյուրեղավան, Ջրվեժ*** և ***Ակունք*** համայնքների ավագանու անդամների համամասնական ընտրակարգով հերթական ընտրությունների անցկացման օր նշանակել ***2022 թվականի սեպտեմբերի 25-ը***:

2. Առաջարկել թիվ *27*, *28* և *29* ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներին՝ *2022 թվականի սեպտեմբերի 25-ը* հայտարարել ընտրության օր, սահմանված կարգով կազմակերպել ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումները:

3. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի *Չարենցավան, Բյուրեղավան, Ջրվեժ* և *Ակունք* համայնքների ղեկավարներին՝ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցի համաձայն իրականացնել համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունները:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2022 թվականի հուլիսի 01
ք. Հրազդան